ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 31 » հուլիս 2024թ. No 4170 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 19-րդ հավելվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N EL/01/1207-24 առ 25.07.2024թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դոսյեի համապատասխանեցման ընթացակարգով գրանցել երաշխավորված 3 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Բաղրյանին՝

1)Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4.Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված «Պանցեֆ դեղահատեր թաղանթապատ 400մգ» դեղի (N 20955) գրանցման հավաստագիրը համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) Ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6.Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի հուլիսի « 31 » - ի N 4170 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դոսյեի համապատասխանեցման ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Ռեկորմոն	Էպոետին բետա	լուծույթ ն/ե և ե/մ ներարկման	2000ՄՄ/0,3մլ; (6/2x3/) նախալցված ներարկիչներ 0,3 մլ և (6) ասեղներ	Ռոշ Դիագնոստիկս ԳմբՀ, Սանդհոֆեր Շտրասսե 116, 68305 Մանհայմ- բալք արտադրող, փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Բիոքսեյ-Լաբոր Բիոլոջիքալ Անալիզիս ԳմբՀ, Նեվենհեյմեր Ֆելդ 515-519, Հեյդելբերգ, Գերմանիա- որակի հսկող (կենսաբանական)	Գերմանիա	Ֆ. Հոֆման-Լա Ռոշ ՍՊԸ, Գրենզաֆերշտրասե 124, 4070 Բազել	Շվեյցարիա	Դ	22214 (009428) 25.07.2024
2	Պանցեֆ	ցեֆիքսիմ (ցեֆիքսիմի տրիհիդրատ)	դեղահատեր թաղանթապատ	400մգ; (5/1x5/) բլիստերում, (7/1x7/) բլիստերում, (10/2x5/) բլիստերում	Ակալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000 Սկոպյե- որակի և բաց թողնման հսկող, Ակալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Պարտիզանսկի օդրեղի 98Ա, 1000 Սկոպյե, Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն- բալք արտադրող, փաթեթավորող	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Ակալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000 Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Դ	22215 (006784) 25.07.2024
3	Տետրակային	տետրակային (տետրակայինի հիդրոքլորիդ)	ակնակաթիլներ	10մգ/մլ; պլաստիկե սրվակ-կաթոցիկ 10մլ	Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9	Հայաստանի Հանրապետություն	Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9	Հայաստանի Հանրապետություն	Դ	22216 (009430) 25.07.2024